Մրցույթ՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Օրգովի Արբի Թրպանճյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի քիմիայի (11 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Ուսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները հանձնաժողով են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
1. դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի
2.բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
3.անձը հաստատող փաստաթուղթ,
4.<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում)
5. ինքնակենսագրություն (Ձև 5),

6.այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7.ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8.հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9.որակավորման տարակարգ ունենալու դպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթրի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են դեկտեմբերի 26-ից մինչև հունվարի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **հունվարի 16–ին՝ ժամը 14:00-ին**, Օրգովի Ա. Թրպանճյանի անվան միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Արագածոտնի մարզ, գ. Օրգով, 2-րդ փողոց, շենք 1-ին: Տեղեկությունների համար զանգահարել 093-26-06-41 հեռախոսահամարով: